ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ

ԲԱԿԱԼԱՎԻՐ ՏԻՊԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

/ ՄԱՐԶՉԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ /

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ

ՆԻՍՏԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1 27.08.2010

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ

ԵՐԵՎԱՆ - 2011

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Սույն ծրագիրը կազմվել է հաշվի առնելով առարկայի ցերեկային ուսուցման տարիների փորձը: Հարկ ենք համարում ընդգծել, որ դասավանդման ընթացքում հնարավոր են ժամաբաշխման որոշ փոփոխություններ:

Դասաընթացի 1-ին կիսամյակում ուսուցանվելու են գրականություն, գրական հայերենի զարգացման շրջանները,հնչյունաբանություն և բառագիտություն, 2-րդ կիսամյակում՝ ձևաբանություն և շարահյուսություն բաժինները:

«Գրականություն» բաժինը նպատակ ունի ծանոթացնել հայ գրականության նշանավոր դեմքերին, նրանց գրական գործունեությանը:

«Հնչյունաբանություն» բաժնի նպատակն է զարգացնել գրագիտությունը:

«Բառագիտություն» բաժինը նպատակ է հետապնդում.

ա/ բանավոր խոսքի զարգացում, բառապաշարի հարստացում.

բ/ մասնագիտական բառապաշարի և տերմինների յուրացում:

«Ձևաբանություն» բաժնի նպատակն է զարգացնել բանավոր և գրավոր խոսքը:

«Շարահյուսություն» բաժնի նպատակն է սովորեցնել կատարել բառի ճիշտ ընտրություն և մտքերը ճիշտ շարադրել:

Գործնական պարապմունքների ընթացքում կատարվող տարբեր տիպի վարժությունները, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական վերլուծությունները հնարավորություն են տալիս ուսանողին բավարար չափով յուրացնել հայերենի ուղղագրությունը և կետադրությունը, ձեռք բերել իրենց մտքերը գրական հայերենով արտահայտելու բավարար հմտություն:

Նախատեսված է 2 ստուգողական թելադրություն: Ստուգողական աշխատանքներում տեղ գտած սխալները ուղղվում և վերլուծվում են, որից հետո ուղղագրական բառային աշխատանաքների միջոցով ուսումնական գործընթացը կազմակերպվում է հաշվի առնելով ուսանողների թույլ տված հիմնական սխալները:

Ուսանողների բանավոր խոսքը զարգացնելու և հարստացնելու նպատակով տարվա ընթացքում կատարվում է «Կապակցված խոսք» վարժությունը՝ ըստ տրված բառերի և բառակապակցությունների՝ վերնագրելով դրանք, ինչպես նաև 2-րդ կիսամյակից սկսած, քերականական կառույցների ուսուցմանը զուգընթաց կատարվում է ընտրված բնագրերի ընթերցում, բովանդակության վերարտադրություն և վերլուծություն:

Հիմք ընդունելով վերոհիշյալ մոտեցումները՝ ծրագրային թեմաները խմբավորել ենք հետևյալ կերպ.

Թեմա 1. Լեզու և հասարակություն. հայոց լեզուն և նրա տեղը աշխարհի ժողովուրդների լեզուների շարքում:

Թեմա 2. Հայ գրական լեզվի զարգացման փուլերը՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Արևելահայերեն գրական լեզվի զարգացման աբովյանական և հյուսիսափայլյան ուղղությունները:

Թեմա 3. Գրականություն (գրականության ներծություն, գրական ժանրեր և ուղղություններ, հայ հին, միջին և նոր գրականության պատմություն)

Թեմա 4. Հնչյունաբանություն. ուղղագրություն և ուղղախոսություն

Թեմա 5. Բառագիտություն

Թեմա 6. Ձևաբանություն

Թեմա 7. Շարահյուսություն

Թեմա 8. Լեզու և ոճ. տեսակներ

Թեմա 9. Սպորտային տերմինաբանություն

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Թեմա 1. Ներածություն

Լեզուն և նրա դերը հասարակության մեջ: Հայոց լեզուն և նրա տեղը աշխարհի լեզուների մեջ: Հայոց լեզվի գրավոր շրջանի զարգացման փուլերը: Արևելահայերեն, արևմտահայերեն: Ժամանակակից հայերենն իբրև ազգային, պետական և գրական լեզու:

Թեմա 2. Հնչյունաբանություն

1.Հնչյուն, հնչույթ, տառ: Հայերենի այբուբենը: Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ: Բաղաձայնների տեսակներն ըստ ձայնի և աղմուկի հարաբերության՝ ձայնեղ, խուլ, ձայնորդ:

2. Վանկ.գաղտնավանկ: Վանկատում և տողադարձ:

3. Շեշտ, հնչյունափոխություն. ձայնավորների և երկհնչյունների հնչյունափոխությունը:

4. է /ե/, օ /ո/ և ը ձայնավորների ուղղագրությունը, ուղղախոսությունը:

5. Հայերենի երկհնչյունների ուղղագրությունը, ուղղախոսությունը:

6.Բաղաձայնների ուղղագրությունը և ուղղախոսությունը:

7. Մեսրոպ Մաշտոցը և հայերեն գրերի գյուտը: Մաշտոցյան այբուբենի թվային արժեքը:

Թեմա 3. Բառագիտություն

1. Հասկացություն բառի մասին՝ որպես լեզվի նվազագույն նշանակիր միավոր:

2. Մենիմաստ և բազմիմաստ բառեր: Տերմին. մարզական տերմինները ժամանակակից հայոց լեզվում: Բառի ուղղակի և փոխաբերական իմաստներ: Հոմանիշ /հոմանիշ և նույնաշիշ/, նույնանուն/, հականիշ բառեր, նույնահունչ բառեր, ուղղագրությունը:

3. Բառապաշար: Հիմնական բառաֆոնդ: Նորաբանություններ և հնաբանություններ: Հասարակաբանություններ և գռեհկաբանություններ: Հայոց լեզվի բառապաշարի հարստացման միջոցներ՝ ներքին -արտաքին:

4. Բառի կազմությունը: Արմատ, ածանց: Պարզ, պարզ ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր բառեր: Բարդ բառերի տեսակները, կազմությունը, ուղղագրությունը:

Հնչյունափոխությունը բառերի ածանցման, հավելման կամ բարդման դեպքում: Հապավումներ, դրանց ուղղագրությունը:

Թեմա 4. Ձևաբանություն

1. Ձևաբանության ուսումնասիրության առարկան. խոսքի մասեր:Արդի հայերենի խոսքի մասերը: Նյութական /անուն, հիմնական/. սպասարկու խոսքի մասեր.

2. **Գոյական անուն:** Հատուկ և հասարակ գոյականներ: Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը և ուղղախոսությունը: Որոշյալ հոդեր՝ ը, ն. գործածությունը, ուղղագրությունը, ուղղախոսությունը, ստացական-դիմորոշ ս, դ, ն հոդերը. ուղղագրությունը, ուղղախոսությունը: Գոյականակերտ ածանցներ:

3. **Ածական անուն.** տեսակները: Որակական ածականի համեմատության աստիճանները, ուղղագրությունը: Հարաբերական ածականներ: Ածականակերտ ածանցներ, ուղղագրությունը:

4. **Թվական անուն:** Տեսակները՝ քանակական և դասական: Կոտորակային, բաշխական, դասական թվականների կազմությունը, ուղղագրությունը:

5. **Դերանուն.** տեսակները, ուղղագրությունը: Անձնական դերանունների հոլովումը, գործածությունը:

6. **Բայ:** Դերբայներ և դիմավոր բայեր:

Հայերենի դերբայները, կազմությունը, ուղղագրությունը,կիրառությունը, դերբայական դարձված: Օժանդակ բայ, կիրառությունը, ուղղագրությունը:

Բայի հրամայական եղանակը և անորոշ դերբայը մասնագիտական բառապաշարում:

7. **Մակբայ**: Կազմությունը, տեսակներն ըստ իմաստի, կիրառումը, ուղղագրությունը:

8. Սպասարկու խոսքի մասեր.

   ա/ **կապ.** հոլովառությունը,կետադրությունը

   բ/ **շաղկապ**. համադասական և ստորադասական. կազմությունը, ուղղագրությունը, կետադրությունը

   գ/ **ձայնարկություն**. ուղղագրությունը

   դ/ **վերաբերական**. կետադրությունը:

Թեմա 5. Շարահյուսություն

1. Շարահյուսություն առարկան: Բառակապակցություն, կապակցության եղանակները /առդրություն, խնդրադռություն, համաձայնություն/:
2. Նախադասություն, հիմնական հատկանիշները /հնչերանգ, ստորոգում/: Նախադասության տեսակներն ըստ հնչերանգի: Կետադրությունը:
3. Նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի /պարզ, պարզ ընդարձակ, բարդ համադասական և բարդ ստորադասական/:
4. Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը և համաձայնությունը:
5. Նախադասության գոյական անդամի լրացումները /որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ/: Կետադրությունը:
6. Նախադասության բայական անդամի լրացումներ /խնդիրներ և պարագաններ/: Կետադրությունը:
7. Նախադասության բազմակի անդամներ, կետադրությունը:
8. Նախադասության տրոհվող անդամների կետադրությունը:
9. Կոչական, կետադրությունը: Կոչականի գործածությունը մասնագետի խոսքում:
10. Եղանակավորող և մեկնական /միջանկյալ/ բառեր, բառակապակցություններ, նախադասություններ/: Դրանց շարադասությունը և կետադրությունը:
11. Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք: Ուղղակի խոսքի շարադասությունը, կետադրությունը: Ուղղակի խոսքի վերածումը անուղղակի խոսքի:
12. Կետադրություն. / ամփոփում և խորացում/: Կետադրության դերը գրավոր խոսքում: Կետադրության նշանների տեսակները՝ տրոհության, առոգանության, բացաահայտության. նրանց գործածածության հիմնական դեպքերը:
13. Լեզու և ոճ:
14. Մարզական տերմինաբանության ստեղծման և զարգացման պատմությունից:
15. Մասնագիտական բառեր և տերմինները:
16. Մարզական տերմինների հստակությունը:

Թեմա 6. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ
ՄԱՐԶԱԿԱՆ ԹԵՄԱՆ ԱՐՁԱԿԻ ՓՈՔՐ ՁԵՎԵՐՈՒՄ:
ՍՊՈՐՏԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ:
/ Փոխադրությունների, շարադրությունների, ակնակրկների օրինակելի թեմաներ/:

1. « Հայկական սպորտի մեծ նահապետը» Հրանտ Շահինյան:
2. « Օղակների արքան» Ալբերտ Ազարյան:
3. « Մեծ ռինգի կախարդը» Վլադիմիր Ենգիբարյան:
4. «Ընտրություն».- Արցախում զոհված մարզիկների հիշատակին:
5. « Իմ մարզաձևի պատմությունից»:
6. « Իմ մարզական /մարզչական/ կենսագրությունը»:
7. «Օտարալեզու մարզական տերմինների գործածությունը իմ խոսքում, պատճառները. դրանց հայերեն ձևերը»:
8. «Մարզական խաղերն ու տոնախմբությունները Հին Հայաստանում»:
9. «Հայ օլիմպիականները Հին Հունաստանի օլիմպիական խաղերում»:

ՀԱՎԵԼՎԱԾ
/ փոխադրություններ, բանավոր խոսքի զարգացում /

1. «Հայերենի առաջին ուսուցիչը»:
2. «Գեղարդի վանքը»:
3. «Հայրենի հողը»:
4. «Էրեբունի քաղաք-ամրոցի հիմնադրումը»:
5. «Արտաշես և Սաթենիկ»:
6. «Մարաթոնյան վազք»:
7. «Երկու լեգենդ»:
8. «Կոմիտասը Փարիզում»:
9. «Սպարապետի վերադարձը»:
10. «Բաբելոնի կախովի պարտեզները»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Է.Բ. Աղայան, Հ. Խ. Բարսեղյան, Հայոց լեզու, դասագիրք հանրակարթական դպրոցի 5-7-րդ դասարանների համար, 1992թ.

2. Ռ.Ա. Իշխանյան, 600 բառ, Երևան,1997թ.

3. Հ.Ա. Հարությունյան,Առձեռն ուղղագրական բառագրքույկ,Երևան,1980թ.

4. Գ.Բ. Ջահուկյան, Ֆ.Լ. Խլղաթյան, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան 1998թ.

5. Ս.Աբրահամյան, Հայոց լեզու,Շարահյուսություն, դասագիրք 7-8-րդ դասարանների համար,1998թ.

6. Ռուբինա Նազարյան, Մայրենին բոլորի համար,1997թ.

7. Հայոց լեզվի հարցաթերթիկ – շտեմարաններ- 2000թ.

8. Էդ. Ջրբաշյան, Գրականության տեսություն, Երևան, 1980թ.

9. Մ.Մ. Մկրյան, Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1976թ.

10. Հայ նոր գրականության պատմություն, 5 հատորով, Երևան, 1972թ.

11. Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Քրեստոմատիա, Երևան, 2007թ.

12. Կ. Բաբայան, Մ. Իսպիրյան «Մարմնամարզական տերմինների տեղեկատու բառարան»:

13. Ռ. Տ. Մելիքսեթյան «Ֆիզիկական դաստիարակության նոր ուղղությունները հայ դպրոցում»:

Ակնկալվող ուսումնական արդյունքներ

«Հայոց լեզու և գրականություն» առարկայի ուսումնառության ընթացքում ուսանողները

<u>կիմանան՝</u>

1. առարկայի նպատակները, խնդիրները,
2. հայոց լեզվի ուղղագրական, քերականական, շարահյուսական կանոնները,
3. շարահյուսորեն ճիշտ կազմել միտքը,
4. բառերի ոճական կիրառությունը,
5. առարկայի մեթոդները, օրինաչափությունները,

<u>կկարողանան՝</u>

1. կարդալ, պատմել և վերլուծել տեքստը,
2. ուսումնասիրել մարզական տերմինաբանությունը և կիրառել ըստ անհրաժեշտության,
3. գրական հայերենով վարել ֆիզկուլտուրայի դասերը,
4. ճիշտ շեշտադրմամբ տալ հրահանգները և պատշաճ մակարդակով վարել մարզական պարապմունքները,

<u>կտիրապետեն՝</u>

1. գրական լեզվի նորմերին,
2. խոսքի կուլտուրայի և էթիկետի կանոններին

Առարկայի ուսուցման ավարտին գնահատման չափանիշներ

Գիտելիքների գնահատումը իրականանում է հարյուր միավորանոց սանդղակով:

Ընդհանուր գնահատականի համար հաշվի են առնվում հաճախումների (10), գիտելիքների (50), ակտիվության (15), ինքնուրույն աշխատանքի (գրավոր) (25) միավորները:

<u>Ուսուցման համար անհրաժեշտ նյութերն են՝</u>

Հայոց լեզվի մասնախմբի կողմից հրատարակած Հայոց լեզվի ուսումնական ձեռնարկը, Լ.Եզեկյանի Հայոց լեզվի ուսումնական ձեռնարկը բուհերի համար, Հ.Զաքարյան և Յու. Ավետիսյանի բառագիտության ձեռնարկը, Լ.Եզեկյանի Ոճագիտություն (ուսումնական ձեռբարկ), Մ.Իսպիրյանի Հայաստանցի և հայազգի օլիմպիականները գիրքը, հայոց լեզվի մասնախմբի կողմից կազմած տարբեր թեստային վարժություններ: